ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔ

Անահիտ Մանասյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր

Ժողովրդավարության դոկտրինի առանձնահատկություններին անդրադառնալիս նշել ենք, որ ներկայացուցչական ինստիտուտների ներմուծումը «ժողովրդավարություն» երևույթի ընկալման շրջանակներում դեռևս 18-րդ դարում փիլիսոփաների կողմից դիտվել է որպես նոր ձև և որակ ձեռք բերելու՝ ժողովրդավարությանը տրված հնարավորություն[1]: Այս ինստիտուտների ներմուծման նպատակը եղել է ձևավորել ու զարգացնել ժողովրդի իշխանության իրականացման արդյունավետ կառուցակարգեր, և այդ տեսանկյունից ակնհայտ է ժողովրդավարության նախնական և հետագա ընկալումների միջև ակումուլյատիվ կապը: Ավելին, այդ փոփոխությունները եղել են որակական, նպատակաուղղված, նպաստել են ժողովրդի իշխանության իրականացման որակապես նոր մակարդակի ձևավորմանը, օժտված են եղել ներքին փոխկապվածության և ամբողջականության հատկանիշով: Հետևաբար, ժողովրդավարության առանցքը կազմող գաղափարի, այն է՝ մարդուն որպես բարձրագույն արժեք ընկալելու, նրա համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը երաշխավորելու, իշխանությունը մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակելու պարագայում ներկայացուցչական ինստիտուտներն ու ***մասնագիտացված*** կառավարումը հասարակական համակարգի համար ունեն նույնպիսի առանցքային նշանակություն, ինչպիսին անմիջական ժողովրդավարությունն է:

Սահմանադրական կայունության ու զարգացման տեսանկյունից ևս ներկայացուցչական ժողովրդավարության կառուցակարգերն ունեն բացառիկ կարևորություն պրոֆեսիոնալ լուծումների ընտրության, պրոֆեսիոնալ որոշումների կայացման և էլիտար կառավարման առումով, հետևաբար՝ դրանց առկայությունը սահմանադրական զարգացումների գործընթացին շատ ավելի մասնագիտացված և արդյունավետ բնույթ է հաղորդում:

Այդ առումով կարևոր ենք համարում 2015թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումներում որդեգրված այն մոտեցումը, որը ենթադրում է Սահմանադրության փոփոխությունների իրականացման գործընթացում անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 202 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 13-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ***ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով***: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրա-

[1] Տե՛ս, օրինակ, **Մանասյան Ա.** էլիտիզմի գաղափարը և դրա դերը ժողովրդաիշխանության արդյունավետ իրացման գործում // Արդարադատություն, N 4 (45), 2018. Երևան, էջ 6-13:

վունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բացառությամբ հիշյալ հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների՝ ***Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով***: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

Ավելին, եթե հիշյալ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:

Կարծում ենք, որ ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցման նման մոդելը կարևոր նշանակություն ունի մասնագիտացված որոշումների կայացման, կառավարման արդյունավետության բարձրացման, ժողովրդի իշխանության և վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման տեսանկյունից և այլ հանգամանքների երաշխավորման պայմաններում կարող է լավագույնս նպաստել կայուն ժողովրդավարական համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ Սահմանադրության զարգացման հիմնախնդիրները վերլուծելիս իրավաբանական գրականության մեջ առավել հաճախ խոսվում է Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու մասին: Մինչդեռ մեր գիտական աշխատանքների շրջանակներում ներկայացված զարգացում հասկացության բնորոշումը[1] հիմք է տալիս եզրակացնելու, որ պարտադիր չէ՝ փոփոխությունը կատարվի իրավական ակտի տեքստի շրջանակներում, այլ այն կարող է վերաբերել նաև նորմի ընկալմանը: Հետևաբար, Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելը Սահմանադրության զարգացման միակ եղանակը չէ. դրա հիմքում ընկած պատճառները բազմաթիվ են:

Առաջին հերթին հարկ է հիշատակել, որ փոփոխման կոշտ կարգի դեպքում սոսկ Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին համապատասխանեցնելը բավարար արդյունավետ չէ, քանզի այն գործուն միջոց չէ: Հիմնախնդրի լուծում չեն նաև ճկուն սահմանադրությունները, քանի որ դա որպես կանոն հնարավորություն է տալիս հեշտությամբ փոփոխելու սահմանադրական կարգավորումները: Մինչդեռ, ինչպես նշեցինք, Սահմանադրությունը կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն է և որպես այդպիսին ամրագրում է կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահ-

[1] Սահմանադրության զարգացումը Սահմանադրության՝ ներքին փոխկապվածության ու ամբողջականության հատկանիշով օժտված այն որակական, նպատակաուղղված ու, որպես կանոն, անդառնալի փոփոխություններն են, որոնց պայմաններում պահպանվում են համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը» (տե՛ս **Մանասյան Ա.** Սահմանադրական դատարանի որոշումների տեղը << իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013, էջ 40-55):

մանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: Ուստի ճկուն սահմանադրությունների պայմաններում առավել մեծանում է կենսագոյի վերը նշված հիմնական կանոններն առանց հասարակական համաձայնության փոփոխելու, իսկ մի շարք դեպքերում նաև՝ հիշյալ հասարակական համաձայնությունը ձևախեղելու հավանականությունը, ինչն իր հերթին հանգեցնում է «սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղման:

Կարևոր է և այն, որ Սահմանադրության զարգացումը հաճախ պայմանավորված է լինում ոչ թե այս կամ այն նորմում տեքստային փոփոխություններ կատարելու, այլ դրա բովանդակությունը բացահայտելու անհրաժեշտությամբ: Այդ առումով ակնհայտ է, որ Սահմանադրության տեքստը չի կարող գոյություն ունենալ շրջապատող իրականությունից վերացարկված: Գաղտնիք չէ, որ այն իրացվում է առօրյա կյանքում, պրակտիկայում: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության առկայությունն ինքնին որևէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է: Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը միայն հնարավորություն կտան երաշխավորել իրավունքի գերակայությունն ու համակարգային կայունությունը: Գերխնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը[1]:

Հետևաբար, եթե ստատիկ առումով տեքստի բովանդակությունը կարող է բացահայտման կարիք չունենալ, ապա նույնը դժվար է ասել հիշյալ տեքստային լուծումների ու իրականության փոխառնչության դեպքերի մասին, երբ, որպես կանոն, սահմանադրական նորմերի իրացման համար պահանջվում է դրանց բովանդակության վերհանում: Իսկ դա նպատակահարմար է իրականացնել ոչ թե նորմի շրջանակներում փոփոխություններ կատարելու, այլ վերջինիս մեկնաբանության միջոցով: Հակառակ տարբերակը՝ սահմանադրական տեքստը կարող է չափազանց ծավալուն դառնալ, որի համապատասխանեցումը զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին կպահանջի անընդհատ փոփոխություններ, ինչը հնարավոր չի լինի արդյունավետորեն ապահովել կոշտ սահմանադրությունների պարագայում, իսկ ճկուն սահմանադրությունների դեպքում կնպաստի իրավիճակի առաջացման, այն է՝ կմեծանա «Սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղման հավանականությունը:

Սահմանադրության զարգացման այլընտրանքային եղանակների, մասնավորապես Սահմանադրության մեկնաբանության ինստիտուտի արմատավորումը պայմանավորելու առումով հարկ ենք համարում ընդգծել, որ ներկայումս սահմանադրությունները, որպես կանոն, սահմանադրական արդարադատության միջոցով ուղղակիորեն ենթակա են դատական պաշտպանության, որի արդյունավետ իրականացումը դժվար է պատկերացնել առանց դրա դրույթների մեկնաբանության: Ակնհայտ է, որ անհնար է կիրառել սահմանադրական նորմը կամ իրականացնել դրա դատական պաշտպանությունը առանց վերջինիս բովանդակության բացահայտման:

Վերը շարադրված հանգամանքներն արդեն իսկ բավարար են փաստելու, որ Սահմանադրության զարգացումը հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել սոսկ դրա տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով, և որ Սահմանադրության մեկնաբանությունը Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից է: Ընդ որում՝ խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի,

---

[1] Տե՛ս **Հարությունյան Գ.** Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում, http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf, վերջին մուտք՝ 20.01.2016:

ի տարբերություն ոչ պաշտոնական մեկնաբանության, այն **ունի համապարտադիր բնույթ** և տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից:

Հավելենք, որ Սահմանադրության զարգացման վերաբերյալ վերլուծությունները ևս վկայում են, որ պետությունների ճնշող մեծամասնությունում Սահմանադրության տեքստային փոփոխությունները Հիմնական օրենքի զարգացման միակ եղանակը չեն: Ավելին, զարգացման այլ ուղիներն այդ առումով ունեն առավել մեծ ու առանցքային նշանակություն[1]: Կարծում ենք, որ դրանք հնարավորություն են տալիս հաղթահարելու ժամանակակից սահմանադրական համակարգերին բնորոշ «նորմատիվ ֆետիշիզմը»: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ արդի քաղաքակրթությունը տառապում է մի հիվանդությամբ, որը կոչվում է «նորմատիվ ֆետիշիզմ»: Նրա գլխավոր ախտանիշը պատկերացումն է այն մասին, որ հասարակական առաջընթացը ձեռք է բերվում սոսկ գոյություն ունեցող ձևական նորմերի կատարելագործմամբ ու նորերը ստեղծելով: Պարադոքսն այն է, որ թեև «նորմատիվ ֆետիշիզմի» անկենսունակությունն անընդհատ հաստատվում է տարբեր ծավալի բազմաթիվ կոնկրետ օրինակներով, սակայն այդ հիվանդությունը շարունակում է գոյություն ունենալ[2]:

Տվյալ պարագայում կարող է հարց առաջանալ, թե արդյոք հստակորեն սահմանազատված են այն դեպքերը, երբ ՀՀ Սահմանադրության զարգացումը անհրաժեշտ է իրականացնել տեքստում փոփոխություններ կատարելու եղանակով, իրավիճակներից, երբ քննարկվող նպատակին կարելի է հասնել մեկնաբանության միջոցով:

Հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն է և որպես այդպիսին ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին ու կազմում են դրա շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը, սահմանադիրը նախատեսել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման տարբերակված կարգ՝ հստակորեն սահմանելով այս գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտներին[3]: Այդ հանգամանքը կարող է հանգեցնել այնպիսի եզրակացության, որ ՀՀ Սահմանադրության զարգացումը, բացի նշվածից, տեքստում այլ եղանակով փոփոխություններ կատարել անհնար է: Սակայն, հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը, կարծում ենք, որ վերը նշված կարգավորումն ամրագրելով՝ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը **գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում նեմուծելու** միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ Սահմանադրության զարգացումը կարելի է իրականացնել նաև, այսպես կոչված, այլընտրանքային եղանակների, մասնավորապես այն մեկնաբանելու միջոցով:

Միևնույն ժամանակ կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առումով հիմնական չափանիշը պետք է լինի Սահմանադրության կայունությունն ապահովելու տեսանկյունից նրա տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է դրա զարգացումն ապահովել առանց հիշատակված տեքս-

---

[1] Տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 9-378:

[2] Տե՛ս Право и правоприменение в России: междисциплинарные исследования / под ред. Волкова В. М., 2011, էջ 139:

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրության (գլուխ 15-րդ): «Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն»:

տային փոփոխությունների՝ **գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում** մեկնաբանություն կատարելով: Հայաստանի Հանրապետության տեսանկյունից դրանք մասնավորապես այն դեպքերն են, երբ առաջանում է ոչ թե այս կամ այն նորմի վերափոխման, այլ բովանդակության բացահայտման անհրաժեշտություն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից է, և որ նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով[1]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ չնայած ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով **Սահմանադրության գերակայությունը**, սակայն կարծում ենք, որ վերջինս Սահմանադրության միակ հատկանիշը չէ, որի ապահովմանը նպատակաուղղված է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությունը: Սահմանադրական կայունության ու Սահմանադրության զարգացման առնչությամբ ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էությունն ընդգծվում է հատկապես այդ երկու գործոնները ապահովելու միջոցով: Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց լինելու հանգամանքը: Հետևաբար, Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովումը սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կարևորագույն խնդիրներից մեկն է, որը, մեր կարծիքով, քննարկվող մարմնի գործունեության նպատակաուղղվածությունը մատնանշելու նպատակով պետք է նույնպես իր արտահայտությունը գտնի ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթի շրջանակներում: Միևնույն ժամանակ, առավել կարևոր ենք համարում հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան մշակույթի ձևավորումը, երբ սահմանադրական դատարանի որոշումներն ընկալվեն ոչ թե սոսկ որպես իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրելու, այլ նաև Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ սահմանադրական կայունության և զարգացման տեսանկյունից ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցման ներկայացված մոդելը կարևոր նշանակություն ունի մասնագիտացված որոշումներ կայացնելու, կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ժողովրդի իշխանության և վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման առումով և այլ հանգամանքների երաշխավորման պայմաններում կարող է լավագույնս նպաստել կայուն ժողովրդավարական համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը:

---

[1] Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել ԱՄՆ Սենատի անդամ Ջորջ Նորիսի հետևյալ խոսքերը. «Մենք ունենք օրենսդիր մարմին, որը կոչվում է Ներկայացուցիչների պալատ՝ կազմված 400 հոգուց: Մենք ունենք մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Սենատ՝ կազմված մոտ 100 հոգուց: Մենք իրականում ունենք ևս մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Գերագույն դատարան՝ կազմված 9 հոգուց, և նրանք ավելի զորեղ են, քան մենք բոլորս միասին վերցրած» (Տե՛ս **Նազարյան Հ.** ԱՄՆ դատական համակարգը, Երևան, 1997, էջ 25-26):

ЭФФЕКТИВНАЯ РЕАЛИЗАЦИЯ ПУТЕЙ РАЗВИТИЯ КОНСТИТУЦИИ КАК ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА КОНСТИТУЦИОННОЙ СТАБИЛЬНОСТИ

Анаит Манасян
Кандидат юридических наук, доцент,
Проректор Академии юстиции

В статье рассматриваются вопросы относительно эффективной реализации путей развития Конституции и значение последней в обеспечении стабильной демократии. Автор приходит к заключению, что модель конституционных развитий, в которых сочетаются механизмы непосредственной и опосредованной демократии, имеет важное значение для принятия профессиональных решений, поднятия эффективности правления, эффективной реализации власти народа и ее целей, и в условиях гарантирования иных обстоятельств может лучшим образом способствовать формированию и укреплению демократической системы.

EFFECTIVE REALIZATION OF THE WAYS OF CONSTITUTIONAL DEVELOPMENTS AS AN IMPORTANT PREREQUISITE FOR CONSTITUTIONAL STABILITY

Anahit Manasyan
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Vice-Rector of the Academy of Justice

Article considers issues with regard to effective realization of ways of constitutional developments and the role of the latter in ensuring constitutional stability. Author concludes that the model of constitutional developments, which combines mechnaisms of direct and intermediated democracy, has an improtant role for professional decision-making, increasing the effectivness of administration, effective realization of the power of people and its aims, and in conditions of guaranteeing the other circumstances can mostly contribute to the formation and strengthening of a democratic system.

Բանալի բառեր – Սահմանադրության զարգացում, զարգացման եղանակներ, անմիջական և միջնորդավորված ժողովրդաիշխանություն, սահմանադրական կայունություն, քաղաքացիական նախաձեռնություն, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն
Ключевые слова – развитие Конституции, пути развития, непосредственная и опосредованная демократия, конституционная стабильность, гражданская инициатива, официальное толкование Конституции
Key words – development of Constitution, ways of development, direct and intermediated democracy, constitutional stability, civil initiative, official interpretation of Constitution